

Փետրվարի 4 ին ըստ սովորութեան վայելուչ հանդիսի տօնուհոյակ Մայր Աթոռում Ս. Վարդանանց տօնը. Ս. Պատարազից յետոյ կատարեցաւ Ս. Նահատակաց Հոգեհանգիստ։

Միաբանից սեղանատանը եկեղեցականաց և աշխարհականաց խումբ բազմութեամբ համեստ ուրախութիւն և շատ մի ազգային բարեմաղթութիւններ եղան ժառանգ. Ուսումնարանի աշակերտաց ախորժ երգեցողութեամբ։

Սոյնատեսակ հանդէս տեղի ունեցաւ թէ՛ Ճաշին և թէ՛ երեկոյեան Գ. Զեմարանում Պ. Տեսչի և ուսուցչաց մասնակցութեամբ՝ զրականական — երեկոյթ և երգահանգէս ևս կատարելով։

* * *

Այլ և այլ քաղաքներից և գիւղերից խմբագրութիւնս այս տարի աւելի քան միւս տարիներում՝ ստացաւ գրութիւններ որովք նկարագրումեն իւրեանց մէջ զպրոցներում և ըն. կատարուած Ս. Վարդանանց տօնի հանգէսը։ Միութարական է, որ տարեցտարի աւելանումէ այսպիսի նշանաւոր և յարգանաց արժանի Ազգի և Եկեղեցւոյ Բարերարաց յիշատակը կատարելու անհրաժեշտութիւնը զգացող հայ հասարակութեանց թիւը։ Յանկալի էր, որ առանց բացառութեան ամենայն հայաբնակ տեղերում ընդհանրաբար այս գեղեցիկ սովորութիւնը։

* * *

Ազգիս Աւհ. Հայրապետի հրամանաւ Մայր Աթոռոյս Վանքական — Տնտեսական Առաջարկութեան Անդամք նշանակեցան ներկայ 1882 թուականի համար Գեր. Մեսրոփը Եպիսկոպոս Սմբատեանց, Գրիգոր Եպիսկոպոս Տէր Մատթէոսեանց, և Բարեշն. Յովհաննէս վարդապետ Տէր Յարութիւնեան Տաթևացի և Գրիգորիս վարդապետ Տէր Յակոբեան Սամաղարցի։

* * *

Ազգիս Աւհ. Հայրապետի հրամանաւ Բարեշնորհ Գարեգին վարդապետ Սաթուռեանց նշանակեցաւ Գործոյ Հայոց Վիճակին փոխանորդ, Յուսով եմք, որ յիշեալ վարդապետ իւր խոհական և եռանդուն գործունէութեամբ կարգիւնաւորէ իւր ստանձնած վսեմ պաշտօնը, որ աւելի կարեւոր և նկատելի է մանաւանդ Գործոյ վիճակում։

* * *

Խմբագրութիւնս ստացաւ այժմ զազարեալ «Փորձի» խմբագիր պ. Արգար Յովհաննիսեանցի խմբագրութեամբ Տիխիսում նոր հրատարակուող «Գրականական և Քաղաքական Արշն»-ը շարաւթաթերթի առաջին համարը։ Սորա թէ՛ թուղթը և թէ՛ տպագրութիւնը մաքուր են ըստ բուսականին։ Սորանում ի լոյս ընծայուած նպատակայարմար նիւթերի ճաշակաւոր ընտրութիւնը, նորա բռնած ուղղութիւնը և մանաւանդ նորա խմբագրին անցեալ տարիներում հրատարակած «Փորձ» ամսաթերթի մէջ ցոյց տուած

ու փորձով ապացուցած յաջողութիւնն ու արդիւնաւորութիւնը տեղիք են տալիս մեզ յուսալ որ պ. Խմբագիր — հրատարակիչը իւր այս նոր հրատարակութեամբը ևս հայ Ազգի և Եկեղեցւոյ իսկական շահուց անաչառ և խոհական ջերմ պաշտպան կհանդիսանայ: Այս ակնկալութեամբ ահա շնորհաւորելով Աբէ-Քանի հրատարակութիւնը՝ կցանկամբ Մեծ Խմբագրին տօկուն գործունէութիւն և կատարեալ յաջողութիւն:

Նոյն շտաբամբարձր կբաղկանայ քառածալ զիրքով 16 երեսներէ և տարեկան գինն է 5 և:

ԳՐԱՔՆՆԱԿԱՆ.

Հայ լեզուի ինքնակոչ Բարեբեկ Պ. Գ. Արծրունի որ ամեն առթի մէջ լեզուի վերանորոգում կքարոզէ, իրրե օրինակ իւր ընտիր հայկաբանութեան և իրր ճաշակ իւր քարոզած լեզուի բարեկարգման, Մշակի վերջին մի քանի թուահամարներէ մէջ իւր հրատարակած հետեւեալ նախագասութիւններն կներկայացնէ ընթերցողաց:

«ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ 5 Մարտի Պրոֆէսոր Բուտլերով ստացաւ համակրական նամակներ Վարչաւիայի համալսարանի 28 Պրոֆէսորներէ յակագեմեան մերկացնելուն պատճարով»: Մշակ № 40:

Մշակ, որ 11 տարիէ ի վեր ռուսերէնէ հայերէն կթարգմանէ, կերեւ թէ տակաւին չէ ուսած որ լաւ Բարեբեկ-Քան ասածդ՝ պէտք է լինի այնպէս՝ ուր շիտթ իմաստ կամ երկմտութեան ենթակայ մի խօսք չգտնուի մինչդեռ վերոյիշեալ թարգմանութեան մէջ՝ յայտնի չէ թէ Պրոֆէսոր Բուտլերով համակրական նամակներ ստացիր է՝ Ակադեմեան այդ Վարչաւիայի 28 Պրոֆէսորներէցը մերկացնելուն պատճառաւ: Թէ այդ Վարչաւիայի 28 Պրոֆէսորներէն համակրական նամակներ է ստացիլ Ակադեմեան մերկացնելուն պատճառաւ, երկրորդ՝ անհասկանելի է նաեւ թէ ի՞նչ կնշանակէ Ակադեմեան Բարեբեկ Պրոֆէսոր Բուտլերով արդեօք Ակադեմեան կողմակցել է զայն մերկացնելով, թէ կհղտոտած լինելուն համար բաղնիք տարիր ու զայն լուալու համար մերկացուցիլ է: Հայերէնի մէջ արդեօք ռուսերէն բառին իմաստին աւելի ճիշտ համապատասխանող ուրիշ բառ մը չէ՞ր կարելի գտնել ու զնել փոխանակ «մերկացնել» բառին, Ակադեմեային հետ միատեղ՝ Մշակի ևս թարգմանչական կարողութեան խեղճութիւնն այսպէս ողորմելի կերպիւ չը Բարեբեկ Պրոֆէսոր թողումը «պատճառ» բառին — զրին տեղ չգիրը գործածելու անհմտութիւնն, զոր վհահանն ներողամտութեամբ իրեն կբաշխեմք:

«ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ 7 Մարտի: Թատրոնի այրվելու ժամանակ մարդկերանց հետ դժբաղդութիւններ չպատահեցաւ»: Մշակ № 40: